

6445

ԳԻՄԱԿՆԵՐԸ ՎԱՐ

Գրեց՝ ԹԱԳԻՈՐ ԽԱՉԻԿԵԱՆ



1924

325

lv-28

«Արձագանգ փարիզի»

27. Bd. Raspail, 227

ՓԱՐԻԶ

«ԴԻՄԱԿՆԵՐԸ ՎԱՐ»

Դարձեալ Քէմբ-Օտտօ կայանը և իր հակառակորդները՝ Ասկէց առաջ՝ արդէն քանիցս առիթ տրուած է ինձ, հրապարակաւ յայտնել, փաստարկելու թէ՛ ո՞րուն ձօտ կը գտնուին կայանիս նախկին հաշիւները և թէ ինչ պատճառներով կայանը բաժնուած է «Հայ Ազգ. Միութենէն» ևն։

Դժբախտաբար, հէնց իրենց ցոյց տուած պերճախօս փաստերով կուզան ապացուցանել թէ՛ Հայ իրականութեան մէջ ճշատուած կ'ապրին, «կաճաւոր կոյրեր», մաքուր նկարագրէ և հոգիէ զուրկ անհատներ, որոնք՝ իրենց սեպհական զբաղումն են դարձուցեր, ամէն բան լսեցնել, խեղաթիւրել, ի հարկին ուրանալ և ստել, և ինչ որ աւելին է, զրպարտել ու մուր քսել, պարկեշտ մարդոց երեսին . . . :

Ըստւած է որ՝ «պատուաւոր մարդիկ անիրաւօրէն ուրիշներու արժանապատուութեան մուր քսելէ կ'զգուշանան», բայց ո՞րոնք են, որ այս անհնապարզ ճշմարտութիւնը ըմբռնելու կարողութենէ զուրկ են արդեօք, ահա այդ թիփերու մասին է որ պիտի խօսինք։

և ոչ թէ իրենց «Հաց»ը, հապա ինչու համար լուեցին այն ժամանակ, երբ Հայ Ազգային Միութիւնը՝ նոյն աչդ գաղթականներու օրական 50 սանթիմ վճարած գումարէն իւրաքանչիւր ամիս 1500-2000 Ֆր. Քէմբէն դուրս ծախսեր կ'ընէր...

Կը հարցնենք Պ. «Ա. Ա.»ին, նոյն ինքն՝ նախորդ Մարտիկահայ Ազգ. Միութեան վճարեալ քարտուղարին, ինք չի գիտէր, ո՞վ տուաւ, ո՞րու դրամէն վճարեցին Ազգ. Միութեան զոյգ քարտուղարներու, «Քէմբ Միւրապոյ»ի պաշտօնէութեանց, Ազգ. Միութեան երկու անգամ տպագրեալ պաշտօնաթղթերու, դարձեալ նոյն մարմնի գրասենեակի նորոգութեան, վարձք, աթոռ, սեղան, կնիք, թուղթ, ձեւան, ևն.ի ծախքերը:

Ազգ. Միութիւնը՝ գրասենեակ նորոգեց, աթոռներ գնեց, պաշտօնական թուղթեր ունեցաւ Քէմբի դրամներով, երբ կայանի գրասենեակը ո՛չ աթոռ և ոչ պաշտօնական թուղթեր ունի, հակառակ որ կայանի գրասենեակէն հազարաւոր նամակներ կը գրուին Յրանսայի զանազան կողմերը և բազմաթիւ օտար այցելուներ կ'ընդունուին Քէմբին մէջ:

Կը հարցնեմ դարձեալ, եթէ ուղղակի գաղթականներու շահն է որ զիրենք կը մղէ պայքարիլ աւելի շատ անձիս դէմ, ի՞նչու համար գաղթականութեան յիշեալ բուն շահերը պաշտպանելու համար երկու տող չի գրեց «Ճակատամարտ»ի թղթակից Պ. «Ա. Ա.»...

Ո՛ւր մնացին ուրեմն անկեղծութիւնն ու անաչառութիւնը, գաղթականներու շահն ու առողջ տրամաբանութիւնը...

Քէմբ Օտտօի կայանը ինքնապահ զառնալէն ի վեր, յատուկ մարդոց միսիա տրուած է կարծես, ճշմարտութիւնը խաչը հանելու ցաւագին և հիւանդ փորձեր կատարել:

Սակայն՝ ճշմարտութիւնը ամէն բանէ գերիվեր, անպարտելի և անհպելի զօրութիւն մըն է, մարդկային ոչ մէկ բանակ, տեսանելի և անտեսանելի ղէնքերով, չի կրնար գայն մեռցնել և թաղել, ճշմարտութիւնը կը խորտակէ նենգաւոր մարդոց լարած որոգայթները և կը ջախջախէ անոնց պայքարող չարանիւթ թեւերը, իսկ ատոր հակառակ՝ ճշմարտութիւնը՝ անբաժան կը մնայ անկեղծ էակներու գործերէն և կը սաւառնի յաղթանակը տօնել, մաքուր հոգիներուն չարին դէմ ունեցած գօտեմարտին:

Արեւին սև ըսողները՝ հոգիով սև ապրողներ են: Գաղթականներու շահերէն ճառողները՝ իրենց ստամոքսը կշտացնելու մարմաջէն, ցաւէն բռնաւորներն են...

Մենք շատ լաւ կը ճանչնանք Ֆեացող օձերու և ոռնացող անօթի գալլերու ճշմարտախօսութեան և հայրենասիրութեան աստիճանաչափը. անոնց նպատակն է, ամէն հնով արատաւորեյ անկեղծ գործողներն ու ազգայինները, որպէսզի՝ այս վերջինները զրուանքով հեռանան ասպարէզէն և իրենք, առաջինները շահագործեն հազար տառապանքներէ անցած և կտոր կտոր եղած հաղթականութիւնը... հէ՛ք ժողովուրդին կոկորդը փակած ցեցերն

րապօյ»ի, բաղաբի, ինչպէս նաև տաճարներով որբերու և այլ
զանազան թշուառներու հանդէպ ցոյց տուած օժանդակութիւն-
ներս: Ինչու «Քէճը Միրապօ»ն լքուեցաւ և ոչ ոք չուզեց այն-
տեղի թշուառ այրիներուն և որբերուն նպաստել ու է ձևով:

Այժմ կ'ոչ կ'ընենք, որ «Ճակատամարտ»ի թղթակիցը նախ
իր անունով հրապարակ գայ, 2) հաստատելու համար թէ՛ խակա-
պէս, ստորագրեալս՝ «Իմ Քլիբով» Քէճըը Աղբ. Մ'ուրթնէն բաժ-
նելով «Հաստատանի ճը վերածած եմ», պայմանաւ որ՝ իմ ճէջ բե-
րած փաստերս ստալօղ դարձուածքներով չի խեղաթիւրէ: Իսկ եթէ
ճիշտակը չի կրնար գլուխ հանել, ստուգիւ իր գլխէն վեր այս
քննութիւնը 3) երկրորդ և վերջին անգամ կ'առաջարկեմ, վերոյիշ-
եալ ձեւով պատուաւոր ազգայիններէ յանձնախումբ ճը կազմել,
Քէճըին բոլոր տոճարներն ու գործառնութիւնները ճանրամատն և
անաչառօրէն քննելու համար:

Եթէ «Ճակատամարտ»ի թղթակից Պ. «Ա. Ա.» բաջութիւնը
չը պիտի ունենայ իմ վերոյիշեալ պայմաններս ընդունելով իր
ըրած զրպարտութիւնները հաստատելու կամ հերքելու հրապարակու.

Մենք այն ժամանակ համարձակօրէն իրաւունք պիտի ու-
նենանք ըսելու թէ՛ Պ. «Ա. Ա.» եւ զիմք հովանաւորողները կը
մնան միտք զրպարտիչներ եւ խառնակիչներ:

Յաղթանակը կամ մեզի կամ իրենց, Վա՛յ պարտուողին...
Դիմակները վա՛ր պարտնեն:

15 Մայիս 924

Մարտիկ



Ք.Ա.Գ.Ի.ՈՐ ԽԱԶԻԿԵՍՆ
(ՏԵՍԻՍԻՆ ԲԷՄԱ ՕՏՏՕԻ)

2013

<< Ազգային գրադարան



6445 NL0039785

